տառաջ, որոնց սահմաններում տեղի են ունենում այս վայրագ տեսարանները։

Մենք համարձակւում ենք յուսալ, որ ձեր ձայնը կը լսէ Ռուսաստանի կայսրը, որը արդէն տեղեկացրել է իր մարդասիրական մտադրութիւնների մասին և ցանկութիւն է յայտնել միջազգային համաձայնութեամբ հաստատել այդ մտադրութիւնը։

Մենք խնդրում ենք ձեզանից նախաձեռնող հանդիսանաք և միւս պետութիւնների աջակցութիւնն ստանալով, տալ Օսմանեան կայսրութեան հպատակներին այն հասարակական խաղաղութիւնը և ընդհանուր կարգը, որոնց բացակայութիւնը այդ պետութեանը այնքան դժբաղդութիւններ է պատճառել և նրան վերջնական կորուստ է սպառնում»։

Ստորագրել են.

Փրանսիա—Բէրթըլօ Լէօն Բուրժուա, աբբէ Լըմիր, Ա. Բրիան, Դ. Կօշէն, Ա. Լըրուաբօլիօ, Օկտաւ Միրբօ, Ալֆրէդ Կրուազէ, Լ. Հալէվի, Կամիլ Պէլլըտան, Գաստօն Դումէրգ.

Բէլգիա—Վանտէրվիլդ, Անսէլ, Հէկտոր Դէնիս, Դէմլօն—Երէցփոխ։

Հօլլանդիա—Բօրժէվիուս՝ նախկին մինիստր.

Անգլիա—Ստէդ, Ծէֆէնսօն, Մօրիսօն, Ադլին, դքսուհի Բէդֆօրտ։

Նորվէգիա—Բէօրնստէրն Բեօրնսօն, Նանսէն.

Դանիա—Բրանդէս, Բայեր.

Իտալիա—Ասկօլի, Բօսսի, Սէրժի պրոֆէսօրները։ (Յառաջ)

ՄԱՀԳՈՅԺ

Կ. Պօլսի Բերայի Թաղում դեկտեմբերի 20-ին կնքել է իւր մահկանացուն տիկին Ագապի Տէր-Ներսիսեանը, Կ. Պօլսի Հայոց Պատրիարք ամեն. Տ. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի քոյրը և յայտնի Միհրան Տէր-Ներսիսեանի ամուսինը։ Հանգուցեալը իւրովսանն միշտ ժամանակցում էր ազգային—եկեղեցական գործերին, որով և մեծ մխիթարութիւն էր պատճառում իւր սրբազան եղբօրը։ Հանգուցեալի յուղարկաւորութիւնը մեծ շքով կատարուել է Բերայի Սուրբ Երրորդութեան եկեղեցում և ամփոփել Շիշլիի ազգային գերեզմանատանը տոհմային դամբարանում։

Մեր խորին ցաւակցութիւնն ենք յայտնում սրբ. Օրմանեանին իւր կրած մեծ կորուստի համար։